քաղ. գործ թիվ ԱՎԴ4/0521/02/20

ՈՐՈՇՈՒՄ
ԴԱՏԱՇԻՆԱՐԱՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23.09.2020թ. ք. Վայք

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահությամբ դատավոր Հ. Դարբինյանի, քարտուղարությամբ Ֆ. Հակոբյանի դռնբաց դատական նիստում քննության առնելով թիվ ԱՎԴ4/0521/02/20 քաղաքացիական գործը

ՊԱՐԶԵՑ

Ըստ Հայցի ՀՀ ճանապարհային ոստիկանության ծառայության ընդդեմ Անդրանիկ Արթուրի Միքայելյանի, Երրորդ անձինք՝ Ծովինար Քջիկի Մարգարյանի, Արթուր Գրիգորի Միքայելյանի՝ Անդրանիկ Միքայելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասերից բաժնեմասը բնեղենով առանձնացնելու և դրա վրա բնագանձում տարածելու պահանջի մասին:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ.Դարբինյանի 27.03.2020թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հայցվորի ներկայացուցիչը միջնորդել է նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն:

Քննության առնվող հայցվորի միջնորդությունը դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն առաջին ատյանի դատարանը կարող է փորձաքննություն նշանակել գործին մասնակցող անձի միջնորդությամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում իր նախաձեռնությամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն գործին մասնակցող անձը փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունն ներկայացնելիս պարտավոր է դրանում նշել ապացուցման ենթակա այն փաստը, որի պետք է հաստատվի փորձագետի եզրակացությամբ, և առաջադրել հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ առաջացել է հատուկ գիտելիքների օգտագործում պահանջող հարցերի բացահայտման և պարզաբանման անհրաժեշտություն, դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն:

Դատարանը գտնում է, նաև, որ փորձաքննության կատարումը պետք է հանձնարարել «ՀՀ փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի համապատասխան փորձագետներին համապատասխան փորձագետներին:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ փորձաքննությունը նշանակվում է հայցվորի միջնորդությամբ դատարանը գտնում է, որ փորձաքննության հետ կապված ծախսերը պետք է կատարվեն հայցվոր ՀՀ ճանապարհային ոստիկանության ծառայության հաշվին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն դատարանն իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը, եթե նշանակել է

փորձաքննություն:

Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է կասեցնել մինչև փորձաքննության ավարտը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ, 157-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով դատարանը

ՈՐՈՇԵՑ

Ըստ հայցի ՀՀ ճանապարհային ոստիկանության ծառայության ընդդեմ Անդրանիկ Արթուրի Միքայելյանի, Երրորդ անձինք՝ Օտիլիան Քջիկի Մարգարյանի, Արթուր Գրիգորի Միքայելյանի՝ Անդրանիկ Միքայելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասերից բաժնեմասը բնեղենով առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին քաղաքացիական գործով նշանակել դատաբժշկաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն:

Փորձաքննության կատարումը հանձնարարել «ՀՀ փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի համապատասխան փորձագետներին:

Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1. Տեխնիկապես հնարավո՞ր է արդյոք բնեղենով առանձնացնել Վայոց Ձորի մարզի Խաչիկ համայնքի 15 փողոցի 13 հասցեում գտնվող / կադաստրային ծածկագրեր թիվ՝ 10-025-0101-0022, թիվ 10-025-0101-0249 / հողամասերից պարտապան Անդրանիկ Արթուրի Միքայելյանին պատկանող 1/3 բաժնեմասը, եթե այո՝ ապա ի՞նչ եղանակներով:
2. Որքա՞ն է կազմում անշարժ գույքերի շուկայական արժեքը:
3. Որքա՞ն է կազմում անշարժ գույքերից Անդրանիկ Արթուրի Միքայելյանին 1/3 բաժնեմասի շուկայական արժեքը:

Փորձագետներին իրավունք վերապահել հետևություններ արտահայտել եզրակացությունում սույն որոշմամբ չառաջադրված այն հարցերի վերաբերյալ, որոնք կծագեն փորձաքննությունն կատարելիս՝ սույն գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների կապակցությամբ:

Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և նախազգուշացման մասին ստորագրություն եզրակացության հետ միասին ուղղարկել դատարան՝ դատական նիստի արձանագրությանը կցելու համար:

Փորձաքննության հետ կապված ծախսերի կատարումը հանձնարարել հայցվոր՝ ՀՀ ճանապարհային ոստիկանության ծառայությանը:

Թիվ ԱՎԴ4/0521/02/20 քաղաքացիական գործի վարույթը կասեցնել՝ մինչև փորձաքննության ավարտը:

Որոշումը կասեցման մասով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ գործին մասնակցող անձանց կողմից այն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ»

ՊՈԱԿ

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Հեռ. (+37410) 77-77-10
Հեռ./ֆաքս (+37410) 77-77-04

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

"НАЦИОНАЛЬНОЕ БЮРО ЭКСПЕРТИЗ"

ГНКО

0004, г. Ереван, пр. Адмирала Исакова 24
Тел. (+37410) 77-77-10
Тел./факс (+37410) 77-77-04

№ 21-0029Ք
05 մարտի 2021թ.

ԹԻՎ ԱՎԴ4/0521/02/19 ՔԱՂ. ԳՈՐԾՈՎ ՀԱՅՑՎՈՐ՝
ՀՀ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ
/ՀՀ , ք. Երևան, Իսակովի պողոտա 9/

ՊԱՏՃԵՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ՝ Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
/ ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք. Վայք, Ջերմուկի խճ. 8,
հեռ.՝ /0282/2-25-95/

Թիվ ԱՎԴ4/0521/02/19 քաղաքացիական գործով 23.09.2020թ-ին ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ դատավոր Հ.Դարբինյանի նախագահությամբ կայացված որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում նշանակվել է դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն, որը ստացվել է 22.02.2021թ-ին: Համաձայն դատարանի որոշման՝ փորձաքննության կատարման հետ կապված ծախսերը դրվել են հայցվոր կողմի վրա:

Հայտնվում է, որ թիվ ԱՎԴ4/0521/02/19 քաղաքացիական գործով նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերը կազմում են 129 360 /հարյուր քսանինը հազար երեք հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, ուստի խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում կատարել դատարանի որոշման պահանջը և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ՀՀ ՖՆ գանձապետարան Երևանի թիվ 1 ՏԳԲ Հ/Հ 900018005588 հաշվեհամարին փոխանցել 129 360 /հարյուր քսանինը հազար երեք հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ՝ նպատակը բաժնում նշելով քաղաքացիական գործի համարը՝ ԱՎԴ4/0521/02/19:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ Ա. ԳԱՀՆԱՊԵՏՅԱՆ

Կատ.
շինարարատեխնիկական փորձաքննությունների
բաժնի պետ՝ Ա. Միրաքյան
ապրանքագիտական փորձաքննությունների
բաժնի պետ՝ Հ.Գաբրիելյան
հեռ. 77-77-10 (+145, +149/

Մատակարար	ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ	
Հասցե **Հ/Հ** **Բանկ** **ՀՎՀՀ**	քաղաք Երևան, Իսակովի 24 900018005588 ՀՀ ՖՆ գանձապետարան Երևանի թիվ 1 ՏԳԲ 01836525	**Փոխանցման հաշիվ N 04** օր 16/03/2021
Վճարող **Հասցե** **Հ/Հ** **Բանկ** **ՀՎՀՀ**	ՀՀ ԿԱ Ոստիկանության ՃՈ պետական կառավարչական հիմնարկ ք.Երևան, Իսակովի 9 900011024321 ՀՀ ՖՆ Աշխատակազմի գործառնական վարչություն 01840082	Պայմանագիր/պատվեր N 21-0029Ք

Լրացում՝ ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Հ. Դարբինյանի 23.09.2020թ-ի որոշման թիվ ԱՎԴ4/0521/02/19 քաղաքացիական գործի համաձայն

NN	Անվանումը	Քանակը	Միավ.	Գինը	Գումարը
1	13-01..Շինարարատեխնիկական փորձաքննություն /Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների ճանապարհաշինարարական և այլ կառուցապատման օբյեկտների փորձաքննություն/հետազոտություն/ 2-րդ կարգ	1	հատ	70,560	70,560
2	16-05..Ապրանքագիտական փորձաքննություն/Անշարժ գույքի, այդ թվում դրա արժեքային ցուցանիշների փորձաքննություն/հետազոտություն/ 2-րդ կարգ	1	հատ	58,800	58,800
			Ընդամենը՝ (ներառյալ ԱԱՀ-ն)		129,360
			Վճարման գումարը՝		129,360

Գումարը բառերով՝ Մեկ հարյուր քսանինը հազար երեք հարյուր վաթսուն ՀՀ դրամ

Կ.Տ.

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ

Տնօրեն՝ _____ Ա. Հովսեփյան

Գլխ.հաշվ.՝ _____ Լ. Հայրապետյան

Կ.Տ.

ՀՀ ԿԱ Ոստիկանության ՃՈ պետական կառավարչական հիմնարկ

_____

_____

3101
19 05 21